Ինքնանկար:

ՃՇԳՐԻՏ ՎԵՐԱՐՏԱԴՐՎԱԾ ՆԵՐԱՇԽԱՐՀ

Մոսկվայում, Սուրիկովյան բուլվարում այցելուների առջև իր դռները բացեց Արվեստների ժողովուրդների արվեստների պետական թանգարանի նոր մասնաշենքը: Նշանավոր ճարտարապետ Դոմենիկո Ժիլարդիի նախագծով անցած դարի ընկզբին կառուցված Լուսինների նախկին տունը շուտով կընդունի թանգարանի ցուցադրանքի զգալի մասը: Իսկ առայժմ այստեղ բացվել է Հայկական ՍՍՀ վաստակավոր նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի անհատական ցուցահանդեսը: Դեռ հինգ տարի առաջ մոսկվացիները հնարավորություն են ունեցել ծանոթանալու նրա ստեղծագործությանը: Ներկա ցուցահանդեսն ընդգրկում է նկարչի վերջին տարիների աշխատանքները:

— Նկարիչը ոչ թե սոսկ պատճենահանում է իրականությունը,—ասում է Ռուդոլֆ Խաչատրյանը:—Ազատվելով ամեն ավելորդությունից՝ նա փնտրում է գլխավորը: Արվեստի ստեղծագործություններում գլխավորը արտաքին նմանությունը չէ, այլ ճշգրտորեն վերարտադրված ներաշխարհը:

Նկարչի այս միտքը առավել ամբողջական է իրագործված նրա դիմանկարներում, որոնք թանգարանի երկրորդ հարկում զբաղեցրել են վեց դահլիճներ: Ցուցահանդեսի այցելուները, իսկ նրանք արդեն ավելի քան 31 հազար են, հնարավորություն են ունեցել ծանոթանալու հայտնի և անծանոթ մարդկանց դիմանկարներին:

Նկարիչը հաճախ է մարդուն պատկերում կարծես թե ժամանակից և կոնկրետ սյուժեից դուրս:

Զուսպ և խիստ է Էդգար Ռյազանովի դիմանկարը: Այստեղ մանրազնին նկարված է հայտնի կինոռեժիսորի դեմքը միայն: Դիմանկարում գլխավորը կիսափակ կոպերի տակից նետված փոքր-ինչ ծաղրական հայացքն է. մնացյալը՝ զգեստի ծալքերը, բազկաթոռի թիկնակի ուրվագծերը, ձեռքերը հազիվ գծագրված են մատիտով: Ատրիբուտներ այստեղ անհարկի են: Բայց ահա դիտողների առջև «Հայելիով նատյուրմորտն» է: Եվ հակիրճության զգացողությունն այստեղ ևս չի անհետանում առարկաների առատությունից: Ռ. Խաչատրյանը վարպետորեն հաղորդում է մետաղի առաձգական ամրությունը, փայտի փափուկ հենքը և հայելու սառը անտարբերությունը, որի մեջ ամեն ինչ արտացոլվում և ապրում է այլ չափումներով: Ավելի նրբին է «Ծաղիկներ» նկարը, որտեղ թափանցիկ ապակու և ջրի պոեզիան սուր հակադրություն է ստեղծում սպիտակ խորքի վրա պատկերված մահաբեր ձողերի հետ:

Ցուցահանդեսում շատ են կանանց դիմանկարները: Գրաֆիկական կոշտ ուրվանկարն այստեղ տեղը զիջում է փափուկ գծերին՝ լուսաստվերի անվերջ նրբերանգներով: Եվ որպես հավերժական, անանց գեղեցկության խորհրդանիշ, կանանց դիմանկարներում կրկնվում է խնձորի թեման, որն ըստ հին հունական առասպելի, Պարիսի ձեռքից վերցրել է սիրո և գեղեցկության աստվածուհին՝ Աֆրոդիտեն:

Մեր ժամանակակից մարդու ճշգրտորեն վերարտադրված ներաշխարհը Ռուդոլֆ Խաչատրյանի դիմանկարների գլխավոր արժանիքն է:

Օ. ԿՈՐՅԱԳԻՆ

Մոսկվա

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՅՆ 5

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1984 Թ., № 37 (997)

„Айрени Дзайн" Ереван
12.09.84